«13. Առուներ մաքրելու ամեն տարվա աշխատանքներին կամ նոր առուներ անցկացնելու աշխատանքներին պիտի մասնակցեին բոլոր տնատերերը։ Այն դեպքերում, երբ այդ աշխատանքները կատարվում էին վարձու ձեռքով, ինչպես, օրինակ՝ **ճահրէզնէր** *փորելու ժամանակ ծախսվող փողը բաշխվում էր այն տնատերերի միջև, որոնք օգտվելու էին նրա ջրից։*

«14. Հասարակական հովիվներ և գյուղական դաշտային պահապաններ վարձելը չէր կարող տեղի ունենալ առանց բոլոր տնատերերի համաձայնության։

«15. Առանց հասարակության բոլոր անդամների գրավոր համաձայնության ոչ ոք չէր կարող լինել գյուղում քահանա»։

Ավանդական համայնական հիմնական սկզբունքների կիրառումով պետք է բացատրել այն, որ շենքով չզբաղեցրած, պարապ տնատեղերից կարող էին օգտվել հասարակության բոլոր անդամները և ամեն մեկը, ով կարիք ուներ՝ կարող էր զբաղեցնել այդ հողն առանց հասարակության համաձայնության։ Միայն մի քանի գյուղերում դրա համար պահանջվում էր հասարակության կողմից թույլտվություն։

Գյուղամերձ արոտավայրերը կարող էին օգտագործել առանց խտրության հասարակության բոլոր անդամները, նույնիսկ վերաբնակվածները և հասարակության մեջ ժամանակավորապես ապրողները։

Չմշակված հողը ոչ ոքի բացառիկ օգտագործման առարկա չէր կարող լինել։ Թույլատրելի էր միայն նրա առանձին բաժինների մշակումը։ Այսպիսով, չէր արգելվում այդ արոտավայրերի այս կամ այն մասը վարել և արտ վերածել, բայց այդ արտը մնում էր նրա ձեռքին միայն մինչև որ կարիք չէր լինում լրացուցիչ վարելահող հատկացնելու սակավահող անդամներին։ Այդ եղանակով առաջ եկած վարելահողը հողաբաժանության ժամանակ միացվում էր վարելահողերի ընդհանուր տարածության հետ։

Միայն այգիները մնում էին տերերի մշտական օգտագործման տակ, սակայն եթե տերը մեռնում էր անժառանգ, այգին անցնում էր ամբողջ հասարակության տրամադրությանը, որը և կարող էր օգտագործել իր ցանկության համեմատ։

Անտառից օգտվելը անպայման ամեն անդամի ազատ իրավունքն էր։ Այդպես էր մինչև որ անտառները ենթարկվեցին պետության ընդհանուր հսկողության։ Ամեն մեկը կարող էր փայտր կտրել անտառում, անտառն արածացնել և բացատները վարելահողի վերածել։ Սակայն այնուհետև էլ հասարակությանը վերապահվեց միայն անտառի պտուղներից և խոտից ազատ օգտվելու իրավունքը, թեև դրա համար հասարակությունը երբեմն պետք է վճարեր մի որոշ գումար։

Բնորոշ էր վարելահողերի և **խոտհարքի** *տարածության հասարակության բոլոր անդամների մեջ հավասարապես բաշխելու ձգտումը։ Այդ նպատակին կարելի էր հասնել կամ այդ հողերը պարբերաբար ամբողջովին վերաբաժանելով կամ բաշխված հողերը հիմնականում թողնելով միևնույն տանտիրոջ ձեռքին՝ ավելորդը կտրելով կամ պակասը լրացնելով[25]։ Վարելահողերի և* **խոտհարքի** *վերաբաժանումը դառնում էր Զանգեզուրի չքավոր գյուղացիության*

---

[25] *Зелинский С. П., նշված աշխ., էջ 45—48։*